ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ

2014-2015 ուստարի

Պատասխանատու՝ Համբարյան Գագիկ

ԳՅՈՒՄՐԻ 2015 թ.

2014-2015 ուստարում Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի Որակի ապահովման կենտրոնն իրականացրել է հետևյալ աշխատանքները՝ ըստ ուսումնական կիսամյակների.

1-ին կիսամյակ

1. ԳՊՄԻ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման արդյունքների վերլուծություն
2. ԳՊՄԻ պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման արդյունքների վերլուծության աշխատանքների ակտիվ մասնակցություն ունեցած ուսանողների պարգևատրում
3. Բուհի պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման հարցաթերթիկների վերլուծված արդյունքների վերաբերյալ ամբիոնների նիստերի քաղվածքների ուսումնասիրություն:
4. ՄՈՒՀ-ի առաքելությունների և նպատակների SWOT վերլուծություն
5. ՄՈՒՀ-ի կառավարման և վարչարարության SWOT վերլուծություն
6. ԳՊՄԻ-ի ՊՈԱԿ-ի անհատական աշխատանքների կազմակերպմանն առնչվող առաջարկություններ
7. ԳՊՄԻ վարչական կառույցների գործունեության արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցաթերթիկների մշակում, վերլուծություն, իրականացում
8. ԳՊՄԻ-ի ուսանողների կողմից մանկավարժական պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման հարցման իրականացում և վերլուծություն
9. ԳՊՄԻ-ում գրադարանից ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածության վերաբերյալ հարցման իրականացում և վերլուծություն
10. Ուսանողական խորհրդատուների աշխատանքի արդյունավետության գնահատում ֆոկուս խմբերի միջոցով
11. Ուսանողներին անհատական և կուրսային աշխատանքի թեմաների տրամադրման վերաբերյալ հարցման իրականացում և վերլուծություն

1)ԳՊՄԻ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման արդյունքների վերլուծություն

Բուհի պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման արդյունքների վերլուծությունը իրականացվել է օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 30-ը , որի աշխատանքներին մասնակցել են նաև ուսանողական խորհրդի ժամանակավոր խմբերը: Այնուհետև վերլուծության արդյունքները տրամադրվել են ամբիոններին:

2)ԳՊՄԻ պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման արդյունքների վերլուծության աշխատանքների ակտիվ մասնակցություն ունեցած ուսանողների պարգևատրում

Որակի ապահովման կենտրոնը բուհի պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման հարցաթերթիկների արդյունքների վերլուծության աշխատանքներին մասնակից, ուսանողական ընկերության ժամանակավոր խմբում ներգրավված ներքոհիշյալ ուսանողների հետագա համագործակցությունը բուհի որակի ապահովման կենտրոնի հետ ապահովելու և նրանց շահադրդելու համար միջնորդել է ռեկտորին՝ նրանց պարգևատրելու համար, և շնորհակալագրերի հանձման արարողությունը իրականացնել հոկտեմբերի 11-ին ինստիտուտում կայանալիք «Բուհերի կառավարման մեջ ուսանողների ներգրավվածության մոդելներ» խորագրով հանրապետական աշխատաժողովի ընթացքում: Պատմաբանասիրական ֆակուլտետից պարգևտրվել են՝ իրավագիտություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Արմինե Մնացականյանը, իրավագիտություն բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Ալբինա Կարապետյանը, պատմություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Մինասյանը, պատմություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Տոնոյանը :

3)Բուհի պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման հարցաթերթիկների վերլուծված արդյունքների վերաբերյալ ամբիոնների նիստերի քաղվածքների ուսումնասիրություն

Որակի ապահովման կենտրոնը բուհի պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման հարցաթերթիկների վերլուծված արդյունքների վերաբերյալ ամբիոնների նիստերի քաղվածքները առաջարկել է տրամադրել Որակի ապահովման կենտրոն՝ հետադարձ կապն ապահովելու համար:

4)ՄՈՒՀ-ի առաքելությունների և նպատակների SWOT վերլուծություն

Որակի ապահովման կենտրոնը իրականացրել և ներկայացրել է ԳՊՄԻ-ի առաքելությունների և նպատակների SWOT վերլուծությունը:

Ուժեղ կողմեր

- ԳՊՄԻ-ին միակ մանկավարժական բարձրագույն ուսումնական հաստատությունն է, որը ՀՀ Շիրակի մարզի և Ջավախքի ազգաբնակչության համար ծավալում է կրթական, գիտական և մշակութային գործունեություն:
- ԳՊՄԻ-ին ունի մանկավարժական, գիտահետազոտական գործունեության 80-ամյա պատմություն:
- ԳՊՄԻ-ում ուսուցումն իրականացվում է եռաստիճան համակարգով (բակալավր, մագիստրատուրա, հետազոտող)՝ ՀՀ ՈԱՇ-ին համապատասխան:
- ԳՊՄԻ-ում բոլոր ստորաբաժանումների գործունությունը միտված է առաքելության իրականացմանը:

Թույլ կողմեր

- Ուսանողակենտրոն միջավայրը դեռևս ձևավորման փուլում է;
- Մինչ 2014 թվականը ՄՈՒՀ-ի գործունեությունը կարճաժամկետ պլանավորմամբ է իրականացվել:

Հնարավորություններ

- ԳՊՄԻ-ում իրականացվող բարեփոխումները նպաստում են աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գիտելիքներով և կարողություններով օժտված մասնագետների պատրաստմանը:
- Ընդլայնվել է ԳՊՄԻ-ի մասնակցությունը միջազգային կրթական ծրագրերին:

Վտանգներ

- Մարզային կրթական դաշտում անառողջ մրցակցություն:

- Նվազող տնտեսական ակտիվությունը:

5) ՄՈՒՀ-ի կառավարման և վարչարարության SWOT վերլուծություն

Որակի ապահովման կենտրոնը իրականացրել և ներկայացրել է ԳՊՄԻ-ի կառավարման և վարչարարության SWOT վերլուծությունը:

Ուժեղ կողմեր

- ՄՈՒՀ-ի կառավարման կառուցվածքը ներքևից վերև:
- Կառավարման համակարգի իրականացումը ներքին իրավական ակտերի միջոցով:
- Կառավարման մարմիններում ներքին շահակիցների՝ ուսանողների, դասախոսների, կանոնակարգված մաս-նակցություն:
- Կառավարման մարմինների՝ Խորհուրդ, ԳԽ, ռեկտորատ, ընդունած որոշումների թափանցիկություն և հասանելիություն:
- ՄՈՒՀ-ի ղեկավարության բարձր շահագրգռվածություն որակի մշակույթի ձևավորման հարցում:

Թույլ կողմեր

- Ֆինանսների տնօրինման ընթացակարգերի ոչ բավարար առկայություն:
- Երկարաժամկետ պլանավորման ոչ բավարար փորձ:
- Վարչական աշխատակազմից բավարարվածության վերաբերյալ հարցումների բացակայություն:
- ՄՈՒՀ-ում չեն գործում ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող համալիր և կանոնակարգված մեխանիզմներ:
- Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմների բացակայություն:

Հնարավորություններ

- ՄՈՒՀ-ի վարչական նոր համակարգի հնարավորությունների լիարժեք օգտագործում:

- ՈԱԿ թիմի աշխատանքի արդյունավետության բարձրացում:

Վտանգներ

- ՄՈՒՀ-ի ֆինանսական միջոցների ձևավորման զգալի կախվածությունը ընդունելության ցուցանիշներից:

6) ԳՊՄԻ-ի ՊՈԱԿ-ի անհատական աշխատանքների կազմակերպման ընթացակարգին առնչվող առաջարկություններ

Որակի ապահովման կենտրոնը ներկայացրել է անհատական աշխատանքների կազմակերպման ընթացակարգին առնչվող առաջարկություններ, որոնք կբարձրացնեն փաստաթղթի կիրառման արդյունավետությունը: Ներկայացրել է հետևյալ առաջարկությունները.

Փաստաթղթի կիրարկման արդյունավետության նպատակով կատարել հետևյալ առաջարկությունները.

1. 2.4-ում՝ Անհատական աշխատանքի թեմաները առաջարկում է դասախոսը տվյալ առարկայի շրջանակում՝ ծրագրային նյութից դուրս: Ընդգծված կապակցությունը նպատակահարմար է հանել, այն պատճառաբանությամբ, որ ծրագրային նյութից դուրս թեմաներ լինել չեն կարող և անհատական աշխատանքը ընդամենը միջանկյալ ստուգման ձև է, որի առավելագույն կշիռը 30-ն է:
2. 3-րդ կետը՝ «Անհատական աշխատանքի վրա աշխատելու փուլերը» անվանվող /ընդ որում խորագիրը կարող է խմբագրման՝ Անհատական աշխատանքի փուլերը/, ամբողջությամբ անհատական աշխատանքի կատարման մեթոդաբանությունն է, որն իր մեջ ընդգրկում է՝

   Գրական աղբյուրների որոնում

   Աշխատանք գրական աղբյուրների հետ

   Սեղմագիրը

   Համառոտագիր

   Մեջբերում

   Անհատական աշխատանքի պլանի կազմում և այլն, և այս կառուցվածքով ինքնանպատակ է լինելու այս փաստաթղթի մեջ:

3-րդ բաժնում, սակայն կան մասեր, որոնք վերաբերում են ընթացակարգին և որոնք նախընտրելի փաստաթղթի հետագա տարբերակում պահպանել. դրանք են ակադեմիական ազնվության մասը:

3. Անհատական աշխատանքի համար, որը միջանկյալ ստուգման ձևերից մեկն է ընդամենը գործոն՝ 3 /հեռակա ուսուցման համար/, 4 և 5 գործոնային գնահատման դեպքում համապատասխանաբար 20, 30, 20 կշիռներով, հանել բանավոր ներկայացումը և այն որպես <u>հեղինակային աշխատանք</u> /3.5.1/ որակավորումը:
4. Վիճելի է նաև գնահատման չափանիշների գոյությունը:

7) ԳՊՄԻ վարչական կառույցների գործունեության արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցաթերթիկի մշակում, վերլուծություն, իրականացում

ԳՊՄԻ վարչական կառույցների գործունեության արդյունավետության գնահատման վերաբերյալ մշակվել է հարցաթերթիկ, որի արդյունավետության բարձրացման համար այն ներկայացվել է գիտխորհդի և ամբիոնների քննարկման: Արդյունքում ներկայացվել են առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել Որակի ապահովման կենտրոնի կողմից և կատարվել հարցաթերթիկում հետևյալ փոփոխությունները.

1. Այն հարցերում, որտեղ ամրագրված են այո և ոչ պատասխաններ, ավելացնել *չգիտեմ* տարբերակը:
2. Հարցաթերթիկի վերջում ավելացնել *առաջարկություններ* կետը:

Հարցաթերթիկի նպատակն է վարչական աշխատանքների արդյունավետ կազմակերպումը, թիրախ խումբն է վարչական աշխատանքների իրականացումը: Հարցմանը մասնակցել են բակալավրի առկա բարձր և մագիստրատուրայի կուրսերի ուսանողները: Հարցաթերթիկում ներառվել են բաց և փակ հարցեր: Հարցում իրականացվել է տարին մեկ անգամ:

Պատմաբանասիրական ֆակուլտետում հարցմանը մասնակցել են 84 ուսանող: Ներկայացնենք արդյունքները ըստ հարցերի.

1) Կազմակերպվու՞մ է Ձեր աշխատանքը Ձեզ հետ կնքված պայմանագրին համապատասխան

70 ուսանողներ գտնում է , որ ԲՈՒՀ-ը իր աշխատանքները կազմակերպում է կնքված պայմանագրին համապատասխան, 12-ը՝ ոչ:

2) Ձեր կարծիքը հաշվի առնվո՞ւմ է Ձեր իրավական կարգավիճակի վրա ազդող որոշումներ ընդունելիս:

68 ուսանողներ գտնում է, որ իրենց իրավական կարգավիճակի վրա ազդող որոշումներ ընդունելիս ԲՈՒՀ-ը հաշվի է առնում իրենց կարծիքը ,իսկ ուսանողներից 12 գտնում է ոչ:

3) Գնահատեք դեկանի կողմից ֆակուլտետում ուսումնական գործընթացի կազմակերպումն ու վերահսկումը:

60 ուսանող ուսումնական գործընթացի կազմակերպման ու վերահսկման դեկանի աշխատանքները գնահատում է գերազանց, 8 համարում է բավարար:

4) Ձեր կարծիքը հաշվի առնվու՞մ է քննատախտակի կազման ժամանակ:

42 ուսանող նշել է, որ քննատախատակի կազման ժամանակ հաշվի առնվում իրենց կարծիքը, իսկ 41՝ ոչ:

5) Գնահատեք քննատախտակի արդյունավետությունը

25 ուսանող քննատախտակի արդյունավետությունը գնահատում է գերազանց, միայն 5 համարում է բացասական:

6) Իր լիազորությունների շրջանակում դեկանը խրախուսում կամ կարգապահական պատասխանատվության ենթարկու՞մ է ուսանողներին:

Ուսանողներից 69-ը համարում է, որ դեկանը իր լիազորությունների շրջանակներում խրախուսում և կարգապահական պատասխանատվության է ենթարկում ուսանողներին, 10-ը գնահատում է, որ չի իրականացում:

Իր լիազորությունների շրջանակում դեկանը խրախուսում կամ կարգապահական պատասխանատվության ենթարկու՞մ է դասախոսներին:

Դասախոսներից 61-ը գտնում է, որ դեկանը իր լիազորությունների շրջանակներում խրախուսում և կարգապահական պատասխանատվության է ենթարկում ուսանողներին, 17-ը գնահատում է, որ չի իրականացում:

7) Ապահովվու՞մ է դեկանի կողմից բավարար տեղեկատվությունը ուսանողներին և դասախոսներին վերաբերող որոշումների կատարման և իրականացման վերաբերյալ:

73 ուսանող գտնում է, որ դեկանի տեղեկացնում է ուսանողներին և դասախոսներին վերաբերող որոշումների կատարման և իրականացման վերաբերյալ, 11՝ ոչ:

8) Դեկանը ժամանակին և օբյեկտիվ արձագանքու՞մ է դասախոսների և ուսանողների բարձրացրած առաջարկություններին, բողոքներին:

56 ուսանող գտնում է, որ դեկանը ժամանակին և օբյեկտիվ արձագանքում է դասախոսների և ուսանողների բարձրացրած առաջարկություններին, բողոքներին, 13՝ ոչ:

9) Վարչական աշխատակիցները ժամանակին և պատշաճ մակարդակո՞վ են արձագանքում ուսանողների և դասախոսների բարձրացրած հարցադրումներին:

54 ուսանող գտնում է, որ վարչական աշխատակիցները ժամանակին և պատշաճ մակարդակով են արձագանքում ուսանողների և դասախոսների բարձրացրած հարցադրումներին, 25՝ ոչ:

10) Լսարանային ֆոնդի արդյունավետ բաշխումից բավարարվածությունը

Ուսանողներից 25 գերազանց են գնահատում լսարանային ֆոնդի բաշխումը, իսկ 6՝ բացասական:

11) Դասատախտակի կազման արդյունավետությունից բավարարվածությունը

Ուսանողներից 25 գերազանց են գնահատում դասատախտակի կազման արդյունավետությունը, իսկ 5՝ բացասական:

12) Վարչական աշխատանքի կազմակերպումը համապատասխանու՞մ է էթիկայի նորմերին:

Ուսանողներից 29 գերազանց են գնահատում վարչական աշխատանքի կազմակերպման համապատասխանելիությունը էթիկայի նորմերին, իսկ 3՝ բացասական:

13) Ձեր կողմից պահանջվող փաստաթղթերի հատկացումը կատարվու՞մ է ժամանակին:

Ուսանողներից 63 գտնում են, որ իրենց կողմից պահանջվող փաստաթղթերի հատկացումը կատարվում է ժամանակին, 14՝ ոչ:

14) Հասանելի՞ է Ձեզ բուհի գործունեության մասին տեղեկատվությունը:

Ուսանողներից 65 գտնում են,որ բուհի գործունեության մասին տեղեկությունը հասանելի է իրենց, իսկ 15՝ ոչ:

15) Գո՞հ եք կայքի կառուցվածքից և տեղեկատվության թարմացման հաճախակիությունից:

Ուսանողներից 56 գոհ են կայքի կառուցվածքից և տեղեկատվության թարմացման հաճախակիությունից, 20՝ ոչ:

16) Արդյոք արդյունավե՞տ է կազմակերպվում ինստիտուտի մասին դրական հասարակական կարծիքի և բարձր վարկանիշի ձևավորման ուղղությամբ աշխատանքները:

49 ուսանող գտնում են, որ արդյունավետ է կազմակերպվում ինստիտուտի մասին դրական հասարակական կարծիքի և բարձր վարկանիշի ձևավորման ուղղությամբ աշխատանքները, 31՝ ոչ:

8) ԳՊՄԻ-ի ուսանողների կողմից մանկավարժական պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման հարցման իրականացում և վերլուծություն

ԳՊՄԻ-ի ուսանողների կողմից մանկավարժական պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման հարցման նպատակն է բացահայտել մանկավարժական պրակտիկայի իրականացման արդյունավետությունը, հարցման մասնակցել են մանկավարժական և արտադրական պրակատիկա անցած ուսանողները: Ներկայացնենք հարցման արդյունքները:

Ուսանողների 69.8% բավարար է գնահատում պրակտիկայի արդյունավետությունը: Մանկարավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողների 41% դժվարություն են ունենում արտադասարանային միջոցառումների նախապատրաստման և անցկացման, 34.2%՝ օրագրերի լրացման, 4.1%՝ դասերին

նախապատրաստման,9.58%՝ դասերի անցկացման ժամանակ, իսկ 4.1%՝ չեն ունեցել ոչ մի խնդիր:

Ուսանողների 70.5% գտնում է, որ անհրաժեշտ է հատուկ պատրաստվածություն պրակտիկայի համար:

Ուսանողների 73% գտնում է, որ անհրաժեշտ է առարկայի դասավանդման մեթոդիկայի դասընթացում ներառել հատուկ գործնական ժամեր մանկավարժական պրակտիկայի մոդելավորման համար, 27%՝ մանկավարժության և հոգեբանության առարկաներից նախատեսված ուսումնական պարկատիկայի շրջանակներում ընդլայնում:












Դուք անձամբ ինչպե՞ս եք գնահատում Ձեր կողմից անցկացված դասերի, միջոցառումների մակարդակը
6%
46%
48%
3
4
5


6բ. Որքանո՞վ է Ձեզ բավարարում պրակտիկայի ղեկավարի գործնական հմտությունները
4%
2%
7%
17%
70%
1
2
3
4
5


Գնահատեք ԳՊՄԻ պրակտիկայի բաժնի կազմակերպչական աշխատանքները Ձեր պրակտիկայի կազմակերպման գործընթացում
3%
6%
14%
42%
35%
1
2
3
4
5


Ի՞նչն էր առավել դժվարություն առաջացնում մանկավարժական պրակտիկայի ընթացքում:
4%
4%
5%
10%
35%
42%
դասերին նախապատրաստվելը,
դասերի անցկացումը,
արտադասարանային միջոցառումների նախապատրաստումը և անցկացումը
օրագրերի լրացման, օրագրի կառուցվածքի հետ կապված խնդիրներ
այլ
չկա


Անհրաժե՞շտ է արդյոք հատուկ պատրաստվածություն պրակտիկայի համար: Եթե «այո», ապա ի՞նչ միջոցներ եք նախընտրում:
0%
27%
0%
73%
1. Առարկայի դասավանդման մեթոդիկայի դասընթացում ներառել հատուկ գործնական ժամեր 72
2. Մանկավարժության և հոգեբանության առարկաներից նախատեսված ուսումնական պրակտիկաների 27


Ինչպե՞ս է ազդել մանկավարժական պրակտիկան Ձեր մասնագիտական ուղղվածության ձևավորման վրա
5%
10%
16%
69%
հաստատել է Ձեր մասնագիտական ճիշտ ընտրությունը, մանկավարժ դառնալու կարողությունը
ոչինչ չի փոխել
հակվել եմ այն մտքին, որ մանկավարժ չեմ կարող դառնալ
առաջ է բերել այլ պատկերացումներ







9) ԳՊՄԻ-ում գրադարանից ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածության վերաբերյալ հարցման իրականացում և վերլուծություն

ԳՊՄԻ-ում գրադարանից ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածության վերաբերյալ հարցման իրականացման նպատակն է բացահայտել գրադարանի խնդիրների առաջնահերթությունները: Հարցման

մասնակցում են դասախոսները և բակալավրի և մագիստրատուրայի ծրագրերի՝ գրադարանից ավելի շատ օգտվող ուսանողներ: Կից ներկայացնում ենք հարցաթերթիկը:

Ներկայացնենք ԳՊՄԻ-ում գրադարանից պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքները:



Ներկայացնենք ԳՊՄԻ-ում գրադարանից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքները:



10) Ուսումնական խորհրդատուների աշխատանքի արդյունավետության գնահատում ֆոկուս խմբերի միջոցով

Պատմաբանասիրական ֆակուլտետում իրականացվել է ուսումնական խորհրդատուների աշխատանքների արդյունավետության գնահատման հարցում: Հարցումն իրականացվել է ֆոկուս խմբերով, որի ժամանակ ուսանողները պատասխանել ուսումնական խորհրդատուի աշխատանքներին վերաբերող հարցերին: Արդյունքները գահացուցիչ էին, ուսանողները գոհ էին իրենց ուսումնական խորհրդատուի աշխատանքներին: Հիմնականում արդյունավետ են համարում, երբ ուսանողական խորհրդատուն և դասավանդող դասախոսը նույն անձն է:

11) Ուսանողներին անհատական և կուրսային աշխատանքի թեմաների տրամադրման վերաբերյալ հարցման իրականացում և վերլուծություն

Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականցվել է անհատական և կուրսային աշխատանքի թեմաների տրամադրման վերաբերյալ հարցում: Հարցմանը մասնկացել են առկա, բակալավր և հեռակա համակարգի բարձր ՄՈԳ ունեցող ուսանողները: Մանկավարժության ֆակուլտետում բարձր է գնահատվել անհատական և կուրսային աշխատանքի թեմաների ժամանակին տրամադրումը:

2-րդ կիսամյակ

1. ԳՊՄԻ ՊԴ կազմի ուսումնամեթոդական գործունեության գնահատում
2. ԳՊՄԻ ՈԱԿ-ի կողմից մասնագիտական կրթական ծրագրերի պլանավորման և իրականացման գործընթացների ստուգումների գնահատում և հետադարձ կապ
3. ԳՊՄԻ ՈԱԿ-ի կողմից իրականացված ստուգումները գնահատելու և հետադարձ կապ ապահովելու համար իրականացրած հարցումների արդյունքների վերլուծություն և կատարված առաջարկություններ և դիտողություններ
4. ԳՊՄԻ-ում ուսանողների կողմից ՊԴ կազմի մասնագիտական և մանկավարժական որակների գնահատում
5. ԳՊՄԻ ինքնավերլուծության լրամշակում
6. ՈԱԿ-ի ուղեցույցի կազմում և հաստատում
7. ՈԱԿ-ի համանցային էջի տվյալների թարմացում

1)ԳՊՄԻ ՊԴ կազմի ուսումնամեթոդական գործունեության գնահատում

Սույն թվականի փետրվարի 9-ից մինչև ապրիլի 6-ը ընկած ժամանակահատվածում իրականացվել է ՊԴ կազմի ուսումնամեթոդական գործունեությունը, մասնագիտական կրթական ծրագրերի պլանավորման և իրականացման համապատասխանությունը կրթության կառավարիչների ակնկալվող արդյունքների ստուգում:

ՈԱԿԻ-ի ստուգումները իրականացվել են բոլոր ֆակուլտետներում: Ժամանակացույցին համապատասխան պատմաբանասիրական ֆակուլտետի հետևյալ ամբիոններում իրականացվել է ՊԴ կազմի ուսումնամեթոդական գործունեության գնահատում՝

- Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
- Հայ գրականության ու նրա դասավանդման մեթոդիկայի և լրագրության ամբիոն
- Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն

Ստուգումների արդյունքում վերհանվել են որոշակի խնդիրներ, որոնք ներկայացվել են ֆակուլտետային հանդիպումների ժամանակ և տրամադրվել է ժամանակահատված դրանք լուծելու համար:

2)ԳՊՄԻ ՈԱԿ-ի կողմից մասնագիտական կրթական ծրագրերի պլանավորման և իրականացման գործընթացների ստուգումների գնահատում և հետադարձ կապ

2014-2015 ուստարվա 2-րդ կիսամյակի մասնագիտական կրթական ծրագրերի պլանավորման և իրականացման համապատասխանությունների ստուգումները գնահատելու և հետադարձ կապ ապահովելու համար ՈԱԿ-ի կողմից մշակվել է հարցաթերթիկ: Ապրիլի 28-29-ը ՈԱԿ որակի ֆակուլտետային պատասխանատուները հարցաթերթիկները բաժանել են ամբիոնի վարիչներին և յուրաքանչյուր ամբիոնի 5 կամ ավելի դասախոսների:

3)ԳՊՄԻ ՈԱԿ-ի կողմից իրականացված ստուգումները գնահատելու և հետադարձ կապ ապահովելու համար իրականացրած հարցումների արդյունքների վերլուծություն և կատարված առաջարկություններ և դիտողություններ

2014-2015 ուստարվա 2-րդ կիսամյակի դասընթացների պլանավորման և իրականացման համապատասխանությունների ստուգումները գնահատելու և

հետադարձ կապ ապահովելու համար ՈԱԿ-ի կողմից իրականացրած հարցումների արդյունքների քանակական վերլուծություն կատարել են որակի ապահովման ներքին համակարգում ընդգրված ուսանողները: Որակական վերլուծություն կատարելու համար ընթերցվեցին հարցաթերթիկներում եղած բոլոր առաջարկություններն ու դիտողությունները: Հետադարձ կապի արդյունքում որոշեցին՝

1. Մշակել ԹՕՊ-երի և ԷԴՓ-երի կազմման մեթոդաբանություն,
2. Հստակեցնել ամբիոնի պատասխանատուների գործառույթները և ակտիվորեն ներգրավել գործընթացի մեջ:

4)ԳՊՄԻ-ում ուսանողների կողմից ՊԴ կազմի մասնագիտական և մանկավարժական որակների գնահատում

Քննարկվել և լրամշակվել 2013-2014 ուստարում կիրառված ՊԴ կազմի մասնագիտական և մանկավարժական որակների գնահատման հարցաթերթիկը՝ հաշվի առնելով բուհի ՊԴ կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման հարցաթերթիկների վերլուծված արդյունքների վերաբերյալ ամբիոնների նիստերի քաղվածքները: Ուսումնառողների բավարարվածությունը դասավանդման և ուսումնառության մեթոդներից, ուսումնառության արդյունքներից և դասավանդողների հոգեբանամանկավարժական մոտեցումներից բացահայտելու համար 2014-2015 ուստարվա 2-րդ կիսամյակում՝ մայիս-հունիս ամիսներին, ՈԱԿ-ի կողմից հարցում է անցկացվել բակալավրի առկա և մագիստրատուրայի կրթական ծրագրերով սովորող ուսանողների շրջանում: Արդյունքները ամփոփվելու են հաջորդ ուսումնական տարում:

5) ԳՊՄԻ ինքնավերլուծության լրամշակում

2014-2015 ուս. տարվա 2-րդ կիսամյակում իրականացվել է ԳՊՄԻ-ի ինքնավերլուծության լրամշակում՝ հաշվի առնելով դիտողությունները:

6)ՈԱԿ-ի ուղեցույցի կազմում և հաստատում

ՈԱԿ-ի տնօրենի և աշխատակիցների կողմից մշակվել է ՈԱԿ-ի ուղեցույց, որը նաև հաստատվել է բուհի ղեկավարության կողմից:

7)ՈԱԿ-ի համանցային էջի տվյալների թարմացում

Թարմացվել և ավելացվել է բուհի կայքի ՈԱԿ-ի էջում որակի գնահատման և մշտադիտարկման մեխանիզմները, ինչպես նաև որակի ապահովման ներքին համակարգի ուղեցույցը:

Որակի ապահովման կենտրոնի տնօրեն՝ Ն. Ավետիսյան

Պատմաբանասիրական ֆակուլտետի ՈԱ պատասխանատու՝ Գ. Համբարյան